




Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍԲԸ ՓԱՐԻԶԻ ՌԱԴԻՕ
«ԱՅԲ»-Ի ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ
(30 սեպտեմբեր 1989 թ.)

Միրով կ'ընդառաջենք Ձեր դիմումին, Մեզի յանձնուած Գերաշնորհ
Տ. Գիւտ Նազգաշեան սրբազանի ձեռամբ ու կը փոխանակենք Մեր խոհերը
ներկայացնել ի պատասխան Ձեր հարցեցումն:

ԱՌԱՋԻՆ.— Անցեալ Դեկտեմբեր 7-ի երկրաշարժը ահաւոր աղէտ էր
մեր հայրենիքի ու ժողովուրդի համար: Ինչպէս գիտէք, գրեթէ ամբողջա-
պէս քանդուեցան երեք քաղաքներ և 58 գիւղեր: Զոհուեցան աւելի քան
քսան և հինգ հազար բնակիչներ: Անտոյն մնացին շուրջ կէս միլիոն: Ան-
ցեալ ձմեռը ողբերգական եղաւ աղէտեալներուն համար:

Պետական իշխանութեանց լայն ծաւալի միջոցառումները, Խորհրդա-
յին Միութեան տաքրեր հանրապետութեանց ու արտասահմանեան մար-
դասիրական կազմակերպութիւններու օգնութիւնները կարևոր չափով ի-
րենց նպատակին հասան: Աղէտեալները մասամբ պատասպարուեցան վրան-
ներու և վագոններու կամ չփլած տուներուն մէջ, կարևոր մաս մը տեղա-
ւորուեցան Երևան ու այլ շրջաններ իրենց հարազատներու, բարեկամնե-
րու քով, բազմահազար մայրեր իրենց երեխաներու հետ փոխադրուեցան
Սև ծովու ափերուն և այլ շրջաններու առողջարաններու մէջ ժամանակա-
ւորապէս: Այժմ կացութիւնը բաւական բարելաւուած է: Վերջին իննը ա-
միսներուն տեղադրուած են պատրաստի բազմահարիւր տուներ, կառուց-
ուած են նոր բնակելի շէնքեր, աղէտեալներէն շատեր իրենց ձեռքերով
կառուցած են մէկ յարկանի բնակարաններ տեղական իշխանութեանց
տրամադրած շինանիւթերով: Այդ աշխատանքները կը շարունակուին:
Աղէտեալ շրջաններու մէջ ամէն ոք ծածկի տակ է, բայց շատեր կը բնակին
6—7 հոգի մէկ սենեակի մէջ ծռեր պայմաններու տակ: Դպրոցները բաց-
ուած են, բոլոր երեխաները կը հետևին դասընթացներուն: Տեղափոխուած
մայրերը իրենց երեխաներով վերադարձած են գրեթէ բոլորը:

Մայր Աթոռը և մեր հոգևորականները աղէտի առաջին իսկ օրերէն
սկսեալ կարելին կատարեցին իրենց նպատար բերելու աղէտեալ մեր ժո-

ղովորդին: Մեր եկեղեցույ անունով արտասահմանէն ուղարկուած մօտ երեք հազար թոնն սննդամթերք, հագուստեղէն և դեղօրայք և այլ իրեղէններ բաժանուեցան աղէտեալներուն մեր հոգևորականներու ձեռքով:

Մայր Աթոռիս միջնորդութեամբ արտասահմանի մեր քոյր եկեղեցիները ստանձնեցին պարտաւորումներ աղէտեալ շրջաններու մէջ՝ կառուցելու բնակարաններ, տնաշինական գործարաններ, հիւանդանոցներ, դպրոցներ և եկեղեցիներու վերանորոգման ծախսեր, բոլորը աւելի քան երեսուն միլիոն տոլարի արժողութեամբ: Իսկ Սփիւռքի հայ եկեղեցական ու ազգային տարբեր կազմակերպութիւններ ծրագիրներ կը մշակեն վերաշինութեան գործին իրենց մասնակցութիւնը բերելու նպատակաւ:

ԵՐԿՐՈՐԴ.— Բնականաբար Մենք օրը օրին կը հետևինք այն զարգացումներուն, որոնք տեղի կ'ունենան Խորհրդային Միութեան տարածքի վրայ վերակառուցման և ժողովրդավարութեան նոր քաղաքականութեան ճամբով, յատկապէս շարք մը ծանօթ հակադատութիւններու մէջ, ուր ձգտումներ, շարժումներ կը դրսևորուին ազգային ինքնավարութեան ու ինքնիշխանութեան կարգախօսներով, երբեմն նոյնիսկ բուն ձևերով արտայայտուած:

Նման շարժումներ դրսևորուեցան և կը շարունակուին դրսևորուիլ նաև Հայաստանի մէջ, ինչ որ Մենք կը գտնենք բնական և ողջունելի, երբ անոնք կ'արտայայտուին ողջմտութեամբ ու հեռատեսութեամբ: Մենք համոզուած ենք որ Խորհրդային Հայաստանը իւր ազգային ինքնիշխանութիւնը պէտք է հետզհետէ ամրապնդէ Խորհրդային Միութեան ազգութիւններու մեծ ընտանիքէն անբաժան: Ներկայ ժամանակներու կացութեան մէջ Հայաստանը դժուար թէ կարողանար գոյատևել առանց Խորհրդային Միութեան քաղաքական պաշտպանութեան և տնտեսական օժանդակութեան:

ԵՐՐՈՐԴ.— Վերջին շաբաթներուն մեր երկրի տնտեսական կեանքը և աղէտեալ շրջանի շինարարութիւնը ծանրօրէն տուժեցին ու տագնապալի վիճակ ստեղծեցին, իբրև հետևանք Ադրաբեյճանի երկաթգծերու դէպի Հայաստան և Ղարապաղ տանող ճամբաներու փակման:

Այս թշնամական և հակաօրինական արարքը մեծ յուզում և վրդովում յառաջացուցած է այստեղ: Մոսկուայի Գերագոյն Խորհուրդի վերջին նիստերէն մէկուն ընթացքին այդ մասին բողոքի ուժգին ձայն բարձրացուց մեր հանրապետութեան նախագահը:

Գերագոյն Խորհուրդը որոշում տուաւ վճռական միջոցառումներու ձեռնարկելու ճամբաները ատրպեճանեան շրջափակումէն ազատելու համար: Սպասելի է որ այս որոշումը անշապաղ կեանքի կոչուի:

ՉՈՐՐՈՐԴ.— Ձեր հարցումը Երևանի մէջ նոր եկեղեցի մը կառուցելու կապակցութեամբ, երևի թիրիմացութեան արդիւնք է: Խօսքը այժմ կառուցելու մասին չէ, այլ ծրագիր կազմելու, Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակը նշելու նաև նոր եկեղեցիի մը կառուցումով մեր մայրաքաղաքի մէջ 2001 թուականին: Պէտք է ընդգծեմ որ այս է մանաւանդ բուն փափաքը Երևանի բնակչութեան և մտաւորականութեան: Նոյնիսկ երիտասարդ մտաւորականներ դիմեցին Մեզ առաջարկով, որ այդ յուշարձան եկեղեցին կառուցուի համաժողովրդական հանգանակութեամբ Հայաստա-



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՎԱՏՈՒՄՅԻ ՓՐԿԱՍՈՒՄԵՐԻ ԵՎ ՓՐԿՎԱՆ ԵՐԵՅԱՆԵՐԻ ՀԵՏ

(10 հոկտեմբեր 1989 թ.)

նի մէջ, ոչ թէ դուրսէն նուիրատուութիւններով: Կը խորհինք թէ այդ ծրագրի իրագործումը կը կատարուի վեց-եօթ տարիներ յետոյ, հաւանաբար յաջորդ կաթողիկոսի օրոք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ.— Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան պահանջը Մաշր Հայաստանին միանալու, անշուշտ որ բնական երևոյթ է, օրինական և համաձայն ազգութիւններու ինքնորոշման սրբազան իրաւունքի: Մեր հայրենի կառավարութիւնը, ինչպէս մեր ամբողջ ժողովուրդը նեցուկ կեցած են Արցախցի մեր եղբայրներուն և քոյրերուն, արդար լուծում մը ակնկալելով: Մանաւանդ այս վերջին շաբաթներուն, Խորհրդային Հայաստանի պատասխանատու ղեկավարներու և հայ երեսփոխաններու հրապարակային համարձակ ելոյթները, թէ Երևանի երեսփոխաններու ժողովներուն և թէ Մոսկուա Գերագոյն Խորհուրդի նիստերուն, յստակ կերպով վկայեցին այդ մասին: Գոտեպնդիչ է որ այս և նման հիմնական հարցերու մէջ կը տիրէ միասնական վերաբերում մեր հայրենի կառավարութեան և հայրենաբնակ ժողովուրդի միջև:

Մենք ևս կը սպասենք որ վերջապէս արդար լուծում ստանայ արցախեան ցաւատանջ հարցը:

ՎԵՏԵՐՈՐԴ.— Մեր այս տաքնապալի ծանր մտահոգութիւններու օրերուն մխիթարական եղաւ որ վերջ գտաւ այն անբնական կացութիւնը որ ստեղծուած էր Մաշր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութիւններու ճանապարհին: Այդ կացութիւնը վերջ գտած է անդառնալի կերպով:

Մենք և Գարեգին Բ կաթողիկոս, Մեր հոգևոր մարտակից եղբայրը, ուխտած ենք առաջնորդուիլ ու գործել՝ մէկ Եկեղեցի, մէկ ժողովուրդ, մէկ մաշր հայրենիք նշանաբանով: Այդ ոգիով մենք պիտի շարունակենք լուծել բոլոր եկեղեցական ու ազգային հարցերը, որոնք կը դրուին մեր առջև: Այս առումով Մենք վերջնական համաձայնութեան յանգած ենք արդէն:

ԵՕԹԵՐՈՐԴ.— Գոհունակ սրտով կ'օգտագործենք այս պատեհութիւնը Ռադիօ «Այր»-ի միջոցաւ Մեր հայրական բարի մաղթանքները և օրհնութիւնները յղելու ձեր ունկնդիրներուն և համայն ֆրանսահայութեան:

Մեր իղձն է ու յորդորը որ Սփիւքի տարածքի վրայ ապրող հայերը մնան հաւատարիմ գաւակները մեր մաշր Եկեղեցիին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, անաղարտ պահպանելով քրիստոնէական բարոյական պատգամներն ու տառապանքները և նաև մեր մայրենի լեզուն, իրենց ապրած կեանքի մէջ:

Միշտ այժմէական կը մնայ Խաչատուր Աբովեանի պատգամը թէ «ազգը պահողը հաւատքն է ու լեզուն»:

Մեր յորդորն է նաև որ արտերկրի հայութիւնը ամուր պահպանէ իր ներքին ազգային միութիւնը և միասնութիւնը մաշր հայրենիքի ժողովուրդի հետ, միշտ անոր վշտակից, միշտ անոր քաջալիր, միշտ անոր օգնական, առանց զոհ երթալու անստոյգ կամ չափազանցեալ լուրերու, որոնք յաճախ կը խեղաթիւրեն իրականութիւնը և մշուշապատ պատկեր մը կը ստեղծեն Հայաստանի իրական կեանքին, իրական կացութիւններուն և իրական զարգացումներուն մասին:

Եւս մէկ հայրական խորհուրդ, ուղղուած հայ Սփիւքի Մեր գաւակ-

ներուն և կազմակերպութիւններուն, որ իրենց բոլոր դատումներու և ձեռնարկներու մէջ երբէք մոռացութեան չտան մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը, մեր անցեալի ողբերգական փորձառութիւնները և մեր ազգի սեփական ուժերու իրական տարողութիւնը:

Մարդկային աշխարհի քաղաքական կեանքի ուղեցոյցը կը շարունակէ մնալ Նիքոյօ Մաքիաւելին: Եւ յայտնի չէ թէ մինչև ե՞րբ:

Կը մնանք աղօթող, որ այսօր վիրաւոր Հայաստանը կարողանայ բուժել իր վերքերը և կարճ ժամանակ անց վերաշինել իր աղէտեալ քաղաքներն ու շէները և տեսնել իրականացումը իր բոլոր արդար սպասումներու:

Բոլորիդ, բոլորին օրհնութիւններ Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն: Ամէն:

